Գրիգոր Ոսկեանի ամուսնական երջանկութիւնը կարճատեւ եղած է։ Տիկ. Էօժէնի թարմ հասակի մէջ հրաժեշտ տուած է այս կեանքին։ 1911 Մայիս 6ին սրտի հիւանդութիւն մը կը կտրէ իր կեանքին թելը։

Մահ

Քիչեր ունեցած են Գրիգոր Ոսկեանի առողջ եւ առոյգ կազմը։ Հիւանդութիւնը անծանօթ եղած է իր բովանդակ կեանքին մէջ։ 69 տարեկան էր, երբ անակնկալ կերպով, 1929 Յունուարին, միակողմանի կաթուած մը կը զգեստէ զինքը, երկու ամիս մտահոգութիւն պատճառելով։ Սակայն շնորհիւ իր առողջ կազմին՝ հետզհետէ կը բուժուի եւ կարող կ՚ըլլայ ոտքի կանգնիլ, նոյն իսկ աշխատիլ։ 1934 Յունուարին երկրորդ կաթուած մը լուրջ կը դարձնէ իր վիճակը։ Մարտ 3ին ուժովցած Ս. Խորհուրդներով՝ կը թողու աքսորավայրս՝ շրջապատուած քրոջմէն, երեք մանչերէն, հարսերէն ու թոռնիկներէն։

Մարդը

Նկարագիրը՝ մարդն իսկ է։ Գրիգոր Ոսկեան տէր էր ուղիղ նկարագրի մը։ Արդար, անշահախնդիր, անկողմնակալ եւ միշտ ճշմարտախօս՝ առանց ակնառութեան ու մարդահաճութեան — ահա յատկութիւններ իր նկարագրին։ Քրիստոնեայ մ՚էր խոր համոզումով. կաթողիկէ մը՝ հաւատքը կեանքի վերածելով։

Օտարներու շրջանակին մէջ լուրջ եւ ծանրախոհ բնութիւնը՝ կը փոխուէր ընտանեկան յարկին տակ եւ բարեկամներու շրջանակին մէջ, ուր կը սիրէր խօսիլ, կատակել, խնդալ ու խնդացնել՝ չէնչող մթնոլորտ մը ստեղծելով։

Նիւթական վիճակը թոյլ չէ տուած իրեն իր սրտին փափագին չափով ձեռնտուութիւն ընել կարօտեալներու. գիտցած է սակայն բարիք սփռել իր շուրջը՝ աղքատին ապրուստի միջոց, անտէրին օգնութիւն, որբին դաստիարակութիւն, հիւանդին ապաստանարան ճարելով՝ իր ազգու միջամտութեամբը։

Հ. ԵՓՐԵՄ ՊՕՂՈՍԵԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԼԱԶԱՐԵԱՆ ՏՈՀՄԻ ԵՒ ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ

(ՊԱՏՄԱԿԱՆ ՈՒՐՈՒԱԳԻԾ)

Աշխատասիրեց՝ ՅՈՎՍԷՓ ԹԱԴԷՈՍԵԱՆ

(Շարունակութիւն եւ վերջ։)

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ԼԻԿԷՈՆԻ ԿԱՄ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԼԵԶՈՒՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ

Երկու խօսք

Լազարեան ճեմարանի պատմութիւնը ամբողջացած չէր լինի, կիսակատար գործ կը լինէր, եթէ չներկայացնէինք համառօտակի նաեւ Լիկէոնի պատմութիւնը։

Այս աշխատանքի մէջ, սակայն, մենք չունինք ինքնուրոյն մաս. մենք ամփոփել ենք 1903 թուին Մոսկուայում լոյս տեսած ռուսերէն լեզուով հրատարակութիւնը՝ «Լազարեան ճեմարանի Մասնագիտական դասարանների 30ամեակը», որ նոյնպէս մի համառօտ ցիշատակարան է Լիկէոնի անցեալի եւ յոբելենական ժամանակի վիճակի։

Մենք չգիտենք, կա՞յ արդեօք որեւէ այլ ուսումնասիրական աշխատանք Լիկէոնի մասին թէ՞ ոչ, բացի յիշեալից, սակայն ամենայն հաւանականութեամբ կարելի է ենթադրել որ նման աշխատանք գոյութիւն չունի, քանզի մեր բոլոր պրպտումների ժամանակ տեղեկութիւններ առնել Լազարեան ճեմարանի մասին, մենք չենք հանդիպել որ եւ է ակնարկի կամ մատնանշումի այդպիսի մի գործի վրայ։

Թերեւս Լազարեան տոհմի եւ ճեմարանի արխիվում լինին նիւթեր Լիկէոնի մասին, որոնք անմատչելի են մեզ։

Կան մի քանի տեղեկութիւններ ճեմարանի 50ամեակին եւ 75ամեակին նուիրուած հրատարակութիւնների մէջ, որոնք վերաբերում են Լիկէոնի անցեալին եւ որոնք լիովին օգտագործուած են մեր ներկայ աշխատասիրութեան երկրորդ մասում։

1872 թ. դեկտեմբեր 16ին բարձրագոյն հրամանով հաստատուած Նոր Կանոնագրով Արեւելեան լեզուների դասաւանդութիւնը ճեմարանում վերջնականապէս զատւում է կիսնազիոնական դասընթացքից եւ ստանում միանգամայն անկախ կազմակերպութիւն, իր յատուկ ուսումնական ծրագրով, իր առանձին բիւջէով ու ներքին վարչութեամբ, այսուհանդերձ նա շարունակում է մնալ ճեմարանի ծոցում, նրանից անբաժան թէ իրաւականօրէն, թէ բարոյապէս ու նաեւ ենթակայ ճեմարանի բարձր վարչական կազմի հսկողութեան ու խնամքին։

Լիկէոնը այս կազմակերպութեամբ պահպանեց իր գոյութիւնը անփոփոխ մինչեւ 1918 թ., երբ ճեմարանի գոյութիւնը վերջ դրաւ նոր քաղաքական-պետական կեանքի ստեղծումով ամբողջ Ռուսաստանում։

Որո՞նք էին այս Նոր Կանոնագրի գլխաւոր հիմունքները. ի՞նչ բարեփոխութիւններ էին մտցրուած ճեմարանի կրթական ծրագրի մէջ։

Առաջին եւ ամենակարեւոր բարեփոխութիւնը կայանում էր նրա մէջ, որ արեւելեան լեզուների դասաւանդութիւնը վերջնականապէս զատւում էր ճեմարանի գիմնազիոնական դասընթացքից եւ կենտրոնացւում էր յատուկ Մասնագիտական դասարաններում կամ Լիկէոնում, որը կազմելով ճեմարանի անբաժան մասը, ենթարկուած ճեմարանի վերատեսչութեան, ստանում էր իր ներքին կեանքի մէջ ինքնավար կազմակերպութիւն. նա պիտի կառավարուէր յատուկ Խորհուրդով, նախագահութեամբ ճեմարանի վերատեսչի (դիրեկտոր), մասնակցութեամբ ճեմարանի տեսչի, Լիկէոնի պրոֆեսորների ու դասախօսների։

Այս ինքնավարութիւնը, թէեւ չափաւոր սահմաններում գծուած, անհրաժեշտ էր արեւելեան լեզուների դասաւանդութեան բնականոն զարգացման համար։

Այսպիսով, Լազարեան ճեմարանը արեւելեան լեզուաց պարփակում էր իր մէջ երկու կրթական բաժին իր յատուկ ուսումնագիմնազիոնական բաժին իր յատուկ ուսումն. ծրագրով, սահմանուած Կայսրութեան բոլոր գիմնազիոնների համար, համաձայն 1864 թ. պետական դպրոցների Կանոնագրի, եւ Մասնագիտական Դասարաններ կամ Լիկէոն, յատուկ ուսումն. ծրագրով եւ իրաւունքներով, համահաւասար Կայսրութեան Համալսարանների մի մասնաճիւղի՝ արեւելեան լեզուների յատուկ ուսումնասիրութեան համար։ Ճեմարանի այս կազմակերպութիւնը միանգամայն համապատասխանում էր նրա հիմնադիրների սկզբից ի վեր հետապնդած ճեմարանի հիմնական նպատակներին՝ ա. դարձնել իրենց դպրոցը այնպիսի ընդհանուր կրթութիւն տուող մի հիմնարկ, որի շրջանաւարտներն առանց արգելքի ու դժուարութեան ի վիճակի լինին մտնելու համալսարան ու ստանալ բարձրագոյն ուսում, եւ բ. արեւելեան լեզուների դասաւանդութիւնը դնել այնպիսի հիմքերի վրայ, որպէս զի ուսանողները պատրաստուէին թէ գիտական աշխատանքների համար արեւելեան ազգերի մշակոյթի ուսումնասիրական ասպարէզում եւ թէ ձեռք բերեն ձեռնհասութիւն վարելու պետական պաշտօններ Արեւելքում, որի հետ Ռուսաստանի փոխյարաբերութիւնները օրէցօր զարգանում ու աւելի սերտանում էին։

Երկրորդ։ Ճեմարանի Մասնագիտական դասարանները ստանում էին այն բոլոր իրաւունքներն եւ առանձնաշնորհումները, որոնցով օժտուած էին Կայսրութեան համալսարանները, համաձայն 1863 թ. յունիս 18ի Նոր Կանոնագրի, սակայն առանց իրաւունքի գիտական կոչումներ տալու իր շրջանաւարտներին։ Դրա փոխարէն եւ որպէս զի խրախուսուած լինին ուսանողներին նուիրելու արեւելեան լեզուների ուսման, Լիկէոնի շրջանաւարտները ստանում էին Ժ եւ ԺԲրդ կարգի աստիճաններ[1]։ Լիկէոնի պրոֆեսորներն ու դասախօսները ստանում էին այն բոլոր առանձնաշնորհումները, որոնք վերա-

[1] Պետրոս Մեծը, կամենալով պետական ծառայութեան մէջ ոչնչացնել ազնուական ծագման սկզբունքը, որին վերագահուած էին մեծ առանձնաշնորհումներ հանդէպ ո՛չ ազնուական ծագում ունեցող պետական ծառայողների, եւ փոխարինել այն անձնական արժանիքների սկզբունքով, 1722 թ. հրատարակեց «Ցուցակ ծառայութեան աստիճանների» օրէնքը, ըստ որի բոլոր պետական պաշտօնեաները բաժանուում էին 14 կարգի կամ աստիճանի։ Ամենից ստորը՝ 14րդն էր, որից եւ սկսում էր ամէն մի պետական պաշտօնեայ իր ծառայութիւնը եւ աստիճանաբար բարձրանում մինչեւ առաջին կարգը, համապատասխան ցուցադրած իր եռանդի, շնորհքի, նուիրումի ու աշխատանքի արդիւնաւէտութեան։ Այս օրէնքը իր ոյժի մէջ էր ամբողջ Ռուսաստանում մինչեւ 1918 թ.։

© National Library of Armenia

պահուած էին համալսարանների պրոֆեսորներին ու դասախօսներին, որպէս պետական պաշտօնեաների ստանալ չքանչաններ, բարձրանալ իրենց կարգի կամ աստիճանի մէջ, ըստ 1722 թուի օրէնքի, սահմանում էր համապատասխանութիւն ստանալիք ռոճիկների ու կենսաթոշակի չափերի միջեւ համալսարանների պրոֆեսորների ստացած ռոճիկների ու կենսաթոշակի հետ, եւ այլն:

Երրորդ, Լիկէոնի դասընթացքը վերածւում էր եռամեայ դասընթացքի փոխանակ նախկին երկամեայի: Լիկէոնը պիտի ունենար՝ 6 պրոֆեսորներ, մի դոցենտ եւ երկու ուսուցիչ հետեւեալ առարկաների համար.

1. Հայերէն լեզու եւ գրականութիւն, 2. Ռուսաց լեզու եւ գրականութիւն, 3. Արաբերէն լեզու եւ գրականութիւն, 4. Պարսկերէն լեզու եւ գրականութիւն, 5. Թուրքօ-տաճկական լեզու, 6. Արեւելքի պատմութիւն, 7. Վրացերէն լեզու, 8. Պարսկերէնի ու տաճկերէնի գործնական ուսում եւ 9. արեւելեան լեզուների գեղագրութիւն:

Առաջին դասարանի համար սահմանուած էր՝ շաբաթական 30 ժամ, իսկ երկրորդ եւ երրորդ դասարանների համար՝ 28ական ժամ պարապմունքներ, չհաշուած շաբաթական մէկական ժամ արեւելեան լեզուների գեղագրութեան համար բոլոր երեք դասարաններում:

Բացի այդ հայ ուսանողները պարտաւոր էին լսել դասախօսութիւններ Հայոց դպրութեան մասին շաբաթական 3ական ժամ բոլոր երեք դասարաններում. վրացի ուսանողներն ու Կովկասեան որդեգիրները՝ վրացերէն լեզու շաբաթական 2ական ժամ բոլոր երեք դասարաններում:

1875 թ. սահմանւում է նաեւ Ֆրանսերէն լեզուի դասաւանդութիւն, յատկացնելով 2ական ժամ բոլոր երեք դասարաններում այն ուսանողների համար, որոնք կը կամենային պատրաստուիլ ծառայելու Արտաքին Գործոց Նախարարութեան մէջ:

Այսպիսով Լիկէոնի դասացուցակը իր փոփոխութիւններով ու լրացումներով ներկայացնում էր հետեւեալ պատկերը.

Լիկէոնի դասացուցակը	Դասախօսութիւնները թիւը I	II	III	Ընդհանուր թիւը
	դասարան			
Հայերէն լեզու եւ գրականութիւն	3	3	3	9
Արաբերէն լեզու եւ գրականութիւն ..	4	4	4	12
Պարսկերէն լեզու եւ գրականութիւն	4	4	4	12
Թուրքօ-տաճկական լեզու	4	4	4	12
Արեւելքի պատմութիւն	2[2]	2	2	6
Ռուսաց գրականութիւն	3	2	2	7
Վրացերէն լեզու	2	2	2	6
	22	21	21	64
Գործնական աշխատանքներ				
Տաճկերէն	Ամէն օր[3]			
Պարսկերէն				
Արեւելեան գեղագրութիւն	1	1	1	3
	23	22	22	67
1875 թուից նաեւ ֆրանսերէն լեզուից շաբաթական 2 ժամ ամէն մի դասարանում	2	2	2	2
	25	24	24	69

Մասնագիտական դասարանների ուսուցչական կազմը: 1902 թուին եւ տարեկան թիւրէն

	Թիւը	Ռոճիկը ընդամենը բոլորին ռուբլի
1. Օրդինար պրոֆեսորներ	3	8·838
2. Էքստրա-օրդինար պրոֆեսորներ	3	5·852
3. Վրացերէնի դոցենտ	1	1·179
4. Տաճկերէնի եւ պարսկերէնի դասատուներ	2	1·572
5. Արեւելեան լեզուների գեղագրութեան դասատու որ ստանձնում է դասախօսներից որեւէ մէկը	1	2·450
6. Ճեմարանի վերատեսուչին յաւելեալ	1	2·450
Ընդամէնը	—	20·225
7. Դպրոցական պիտոյքներ	—	266
8. Մասնագիտական դասարանների համար	—	1·500
9. 15 Կովկասեան որդեգիրների համար եւ 4 Ն. Կ. Մեծութեան որդեգիրների համար ..		7·600
Ամբողջը	—	29·591

Ուսուցչական անձնական կազմը հետագայ տարիներում ենթարկւում է մի շարք փոփոխութիւնների, միշտ նպատակ ունենալով ուժեղացնել այդ կազմը աւելի կարող գիտական ոյժերով:

[2] 1899/1900 թուից՝ 3 ժամ:
[3] 1902 թուից 4ական ժամ ամէն մի դասարանում: 1873 թուից մտցրուած են արաբերէն լեզուի համար գործնական վարժութիւնների ժամեր:

1872 թուին մենք ունինք երեք հայ ակադեմիական պրոֆեսոր-դասախօսներ՝ Մ. Էմին՝ Հայկական դպրութեան դասատու, Ստ. Նազարեանց՝ Պարսկերէն լեզուի ու դպրութեան դասատու եւ Գէորգ Քանանեան՝ Արեւելքի հին ու միջին դարերի պատմութեան դասատու:

Այնուհետեւ Մոսկուայի համալսարանի յայտնի Պրոֆ. Վ. Գերիէն հրաւիրւում է Արեւելքի պատմութեան նոր դարաշրջանի դասախօս:

Գէորգ Քանանեանի մահից յետոյ, նրա դասերը ստանձնում է նոր վերատեսուչ Պրոֆ. Վ. Միլլերը:

Մ. Էմինին փոխարինում է Գր. Խալաթեանը, նրա աշակերտը:

Ռուսաց դպրութեան դասատու Պոպովին փոխարինում է Մոսկուայի համալսարանի Պրոֆ. Ալէքսէյ Վեսելովսկին, որն, ի դէպ, հայասէր մէկն էր, ինչպէս եւ նրա որդին՝ Իւրիյ Վեսելովսկին:

Սա. Նազարեանցին փոխարինում են ուրիշները եւ ի վերջոյ հրաւիրւում է աշխարհահռչակ լեզուագէտ Պրոֆ. ակադեմիկոս Ֆ. Կորշը պարսկերէն լեզու ու դպրութեան ամբիոնի համար, իսկ պարսկերէն գործնական դասերի համար իրանցի Միրզա Զաֆար Տէր-Զաքարովը:

Վրացերէնի դասատու է հրաւիրւում վրացի Ա. Խախանովը:

Իսլամի պատմութեան եւ արաբական դպրութեան ամբիոնը ստանում է 1901 թ. Պրոֆ. Կրիմսկի:

Միաժամանակ ջանք է տարւում ճոխացնելու Լիկէոնի կրթական ծրագիրը, սահմանելով նոր առարկաների դասաւանդութիւն:

Այսպէս, 1898 թ. սահմանւում են համեմատական լեզուագիտութեան ու հին պարսկերէն լեզուի դասընթացքներ, որոնք յանձնւում են ճեմարանաւարտ լեզուագէտ Լեւոն Մաերեանցին:

Սահմանւում եւ նաեւ ազգագրութեան դասընթացքներ, որի համար հրաւիրւում է Մոսկ. համալս. Պրոֆ. Խարուզինը:

1880 թ. արաբերէնի գործնական դասերի համար հրաւիրւում է Միխայիլ Օսիպովիչ Ատտայեա, որը միաժամանակ գիմնազիոնական բաժնում վարում էր դասախօսական պաշտօն:

1901 թ. սահմանւում է սարտերի լեզուի դասաւանդութիւնը, որն ստանձնում է Միրզա Աբդուլլա Գաֆարովը:

Մէկ ուրիշ կարեւոր նորութիւն էլ մտցնում է 1891 թ.: Այդ թուականից սկսած Լիկէոնի ուսանողներին պարտադրում են յաճախել Մոսկ. համալսարանի Իրաւաբանական մասնաճիւղը եւ հետեւել իրաւաբանական գիտութիւններից՝ քրէական, քաղաքացիական ու պետական իրաւունքի դասախօսութիւններին:

Պրոֆ. Վ. Միլլերի վերատեսչութեան օրօք ուսումն. ծրագրի առարկաների վրայ աւելանում է նաեւ մահմեդական իրաւունքի դասաւանդութիւնը:

Այս բոլոր բարենորոգումներն ու խնամքը՝ բարձրացնել Լիկէոնի գիտական մակարդակը, դրաւում են հասարակութեան, մասնաւորապէս արեւելագէտների ուշադրութիւնը, համակրանքն ու վստահութիւնը եւ Լիկէոնը ձեռք է բերում մեծ համբաւ համաեւրոպական գիտական աշխարհում:

Արեւելագէտների բոլոր միջազգային համագումարներին Լազարեան ճեմարանը սիրով հրաւիրւում է բերելու իր թանկագին մասնակցութիւնը:

Լիկէոնի ուսանողների գիտական աշխատանքները արժանանում են հրապարակային գնահատանքի:

Այսպէս, 1882 թ. Համառուսական ցուցահանդէսում Լիկէոնի ուսանողների արեւելեան գեղագրութեան օրինակները ստանում են երկրորդ կարգի վկայական, որը համահաւասար էր արծաթէ մեդալի:

Լիկէոնի ուսանողները տպագրում են արեւելագիտութեան վերաբերեալ իրենց գիտական աշխատանքները, հանդէս են գալիս գիտական զեկոյցներով Մոսկուայի Կայսերական Հնագիտական Ընկերութեան Արեւելեան Ցանձնաժողովում եւ արժանանում ուշադրութեան ու գնահատանքի:

1900 թ. Փարիզի համաշխարհային ցուցահանդէսին Լազ. ճեմարանի Լիկէոնը ստանում է ոսկէ մեդալ իր կատարած գիտական լուրջ ուսումնասիրական աշխատանքների համար՝ մասնաւորապէս 887 թ. Հայկական Աւետարանի հրատարակութեան համար:

Լիկէոնի աճող ու տարածուող գիտական հասատութեան համբաւը առաջ է բերում հետաքրքրութիւն նաեւ օտար կառավարա-

© National Library of Armenia

կան շրջաններում, ինչպէս եւ Եւրոպայի արեւելագէտների շարքերում:

1876 թ. Լիկէոնին այցելութիւն են տալիս ականաւոր արեւելագէտներ՝ Պրոֆ. Շեֆֆէրը, Ժիւլ Օպպերտը, Ֆոն-Միւլլէրը, իսկ 1900 թ. Բերլինի համալսարանի Պրոֆ. Հարտմանը, իսկ 1881 թ. մահմեդական գիտնական մոլլա Փիրաձէն:

Ամենքը միաբերան վկայում են, որ Լիկէոնի ուսանողները ցուցադրում են մեծ յաջողութիւններ արեւելեան լեզուների իւրացման գործում:

1873 թ. մայիս 3ին այցելում է ճեմարանը Պարսից Շահնշահը Նասրէդդինը, որին ճեմարանի կողմից ողջունում են Պրոֆ. Ստեփան Նազարեանցը պարսկերէն լեզուով, իսկ Պրոֆ. Մարկոսը՝ արաբերէն. աշակերտները երգում են հայերէն երգեր: Շահին ցոյց են տալիս արեւելեան լեզուներով գրքերի եւ ձեռագիրների գրադարանը:

Ն. Դելեանովի վերատեսչութեան օրօք ճեմարանին այցելութիւն է տալիս Բրազիլիայի կայսրը, որն առանձնապէս հետաքրքրւում է արեւելեան լեզուների դասաւանդութիւնով:

Այս առթիւ, Պրոֆ. Խանանովը, որի գրչին է պատկանում Լիկէոնի 30ամեակի պատմութիւնը, նկատում է, որ ճեմարանը եւ մանաւորապէս Լիկէոնը մեծ բարգաւաճման է հասնում վերատեսուչներ՝ Ն. Դելեանովի եւ մանաւանդ Գէորգ Քանանեանի օրօք:

«37 տարուայ ընթացքում, — ասում է նա — Գ. Քանանեանը ճեմարանի հոգին էր. նա իր ձեռքումն էր պահել Լիկէոնի լաւագոյն կազմակերպութեան բոլոր հոգսերի ղեկավարութիւնը: Նրան է պատկանում, ի միջի այլոց, Լիկէոնի գրադարանի համար առանձին շէնքի կառուցման պատիւը. նրա անմիջական հսկողութեան տակ է կատարուած շէնքի կառուցման գործը»:

Լիկէոնը ընդունում էին այն աշակերտները, որոնք աւարտել էին ճեմարանի գիմնազիոնական լրիւ դասընթացքը եւ առհասարակ պետական միջնակարգ դպրոցները եւ ստացել հասունութեան վկայական, թէ որպէս իսկական ուսանողներ, թէ որպէս ազատ ունկնդիրներ:

1888 թուին ազատ ունկնդիրների թիւը այնքան է բազմանում, որ Լիկէոնի խորհուրդը որոշում է սահմանել նրանց համար երեկոյեան դասընթացքներ:

Ազատ ունկնդիրների կազմը եղել է շատ բազմազան՝ հասարակութեան բոլոր խաւերից. կային՝ զինուորականներ, քահանաներ եւ մեծ մասամբ պետութեան բարձրագոյն դպրոցների ուսանողներ:

Հետեւեալ տախտակը տալիս է լրիւ պատկեր Լիկէոնի ուսանողների թէ կազմի մասին եւ թէ նրա զարգացման փուլերի մասին 30 տարուայ ընթացքում:

Տախտակ
Լիկէոնի ուսանողների կազմի ու շրջանաւարտների թուի 30 տարուայ ընթացքում: 1871/72—1901 թ.

Ուսումն. տարի	Ուսանողների ընդհ. թիւը առ 31-նուարի	Լիկէոնի ուսանողներ	Ազատ ունկնդիրներ	Լ. ճեմարանի գիմնազիոնից Լիկէոն մտածները	Լիկէոնի ուսումնաւարտներ
1871/72	7	5	2	2	—
1872/73	18	10	8	4	—
1873/74	17	7	10	—	3
1874/75	20	10	10	2	6
1875/76	15	6	9	—	1
1876/77	42	5	37	7	3
1877/78	57	7	50	7	8
1878/79	48	19	29	4	17
1879/80	30	17	13	3	10
1880/81	18	15	3	3	4
1881/82	15	15	—	2	5
1882/83	23	21	2	3	5
1883/84	16	15	1	2	3
1884/85	19	18	1	2	6
1885/86	22	16	6	2	4
1886/87	33	26	7	1	5
1887/88	29	24	5	2	4
1888/89	29	26	3	1	7
1889/90	27	26	1	1	6
1890/91	27	26	1	5	5
1891/92	24	24	—	5	3
1892/93	33	31	2	5	6
1893/94	37	34	3	5	9
1894/95	35	32	3	3	9
1895/96	31	26	5	3	7
1896/97	24	20	4	6	3
1897/98	30	23	7	3	7
1898/99	33	26	7	3	5
1899/1900	36	30	6	1	10
1900/01	55	48	7	1	8
1901/02	56	50	6	2	14
Ընդամենը՝	906	658	248	90[4]	183[5]

[4] 658 ուսանողներից, միայն 90 հոգի են որ ճեմարանի գիմնազիոնական դասընթացքը աւարտելով՝ ուսումը շարունակել են Լիկէոնում իրենց բարձրագոյն կրթութիւնը ստանալու համար. միջին հաշուով 30 տարեկան միայն 3 հոգի:

Այս մի նոր ապացոյց է, որ ճեմարանի միջնակարգ բաժնում շատ ուժեղ է եղել ձգտումը դէպի համալսարան:

[5] Լիկէոնի ուսումնաւարտների անուանացուցակում ցոյց է տրուած 184 անուն:

Աւելացնենք, որ առ 24 հոկտեմբեր 1902 թ. Լիկէոնը ունեցել է 62 ունկնդիրներ, որոնցից 47 հոգի իսկական ուսանողներ եւ 15 հոգի ազատ ունկնդիրներ:

Այսպիսով, ունկնդիրների թիւը 30 տարուայ ընթացքում բազմացել է 9 անգամ:

30 տարուայ ընթացքում Լիկէոնը ունեցել է 184 շրջանաւարտներ, որոնցից ոմանք գործել են դիւանագիտական ասպարէզում Արեւելեան եւ այլ երկիրներում՝ Պարսկաստան, Թիւրքիա, Եգիպտոս, Բրազիլիա եւ այլն: Ոմանք՝ պետական-հասարակական ասպարէզում, ոմանք էլ՝ արդիւնաբերական բնագաւառում Ռուսաստանի ներքին գաւառներում, Միջին Ասիայում, Կովկասում:

Այդ 184 ուսումնաւարտներից 142 հոգի ռուսներ են եղել, 22 հոգի հայ-լուսաւորչականներ եւ 20 հոգի այլ դաւանանքներից:

Հայերի ընչին թիւը բացատրւում է նրանով, որ ցարական ռեժիմի օրօք հայ երիտասարդութեան առաջ փակ են եղել ոչ միայն դիւանագիտական ծառայութեան համար դռները, այլ եւ մի շարք այլ գրաւիչ պաշտօններ ստանալու հնարաւորութիւնից զուրկ է եղել...:

Այս 184 շրջանաւարտների հետագայ ճակատագրի մասին տեղեկութիւնները պակասում են, յայտնի է միայն, որ նրանցից 40 հոգի ծառայելիս են եղել Արեւելքում դիւանագիտական եւ վարչական ասպարէզներում՝ Պոլիս, Թեհրան, Մէշէդ, Աստրաբադ, Դամասկոս, Դահիրէ, Բոմբէյ, Բաղդադ եւ այլն. 50 հոգի ծառայելիս են եղել ներքին գործոց նախարարութեան եւ Ժողովրդ. լուսաւորութեան նախարարութեան մէջ՝ Կովկասում, Ղրիմում, Անդրկասպեան երկրում:

*

Արեւելեան լեզուների ուսուցման զարկ տալու եւ աւելի մեծ թուով ուսանողներ դրաւելու համար սահմանուել են թոշակներ, բացի այդ ճեմարանը իր կողմից տուել է չքաւոր ուսանողներին դրամական նպաստ, ազատել է ուսման վարձից, հայթայթել է մասնաւոր վճարովի դասեր ու տուել մատչելի արժէքով նախաճաշ եւ ճաշ:

Ուշագրաւ է, որ 30 տարուայ ընթացքում Լիկէոնի ուսանողների մէջ տեղի չեն ունեցել ո՛չ մի խլրտում կամ դժգոհութիւն ու բողոքի արտայայտութիւններ թէ ներքին կեանքից անբաւական լինելու հետեւանքով եւ թէ քաղաքական գետնի վրայ:

Այս երեւոյթը բացատրւում է մասամբ նրանով, որ ուսանողների թիւը եղել է շատ սահմանափակ, մասամբ էլ, որովհետեւ Լիկէոնի դասախօսների ամբողջ կազմն ու ճեմարանի վարչութիւնը չափազանց ուշադիր ու հոգատար վերաբերմունք են ցուցադրել ուսանողների հանդէպ եւ հաստատել մտերիմ յարաբերութիւններ ու բարոյական կապ նրանց հետ, ոչ միայն նրանց ճեմարանում եղած ժամանակաշրջանում, այլ եւ երբ, աւարտելով իրենց դասընթացքը լիկէոնում, կեանք են մտել:

*

Լազարեան ճեմարանի գլխաւոր ղեկավարութիւնը հետամուտ է եղել ո՛չ միայն այն անմիջական գործնական նպատակներին հասնելու լաւագոյն կերպով, որոնք դրուած են եղել Լիկէոնի առաջ, այն է՝ պատրաստել գործիչներ ծառայելու Արեւելքում, այլ եւ ջանք չի խնայել զարկ տալու զուտ գիտնական ուսումնասիրութեան Արեւելեան լեզուների, գրականութեան, հնութիւնների եւ այլն, ուրիշ խօսքով՝ դնել արեւելագիտութիւնը լուրջ հիմքերի վրայ:

Այսպէս, 1888 թ. պետական խորհրդական Դանիէլ Քանանեանի նուիրաբերուած գումարը յատկացւում է Հայոց լեզուի ու պատմութեան մասին գիտական լաւագոյն աշխատանքների հեղինակներին:

Եւ 1894 թ. այդ մրցանակը՝ 400 ռուբլի տրւում է Բեռլինի համալսարանի փիլիսոփայութեան Դոկտոր Դաղբաշեանին Հայ Բագրատունիների պատմութեան ուսումնասիրական աշխատանքի համար:

Այնուհետեւ Պ. Հայկունին պարգեւատրւում է՝ «Նիւթեր ժամանակակից հայերի սովորոյթի իրաւունքի մասին» ուսումնասիրական գործի համար:

Մ. Էմինը կտակում է Լիկէոնին 10·000 ռ., որպէս զի նրա տոկոսներով հրատարակուեն

© National Library of Armenia

նիւթեր եւ ուսումնասիրութիւններ Հայկական ազգագրութեան մասին:

Այդ գումարի տոկոսներով սկսած 1893 հրատարակուած են հէնց իր Էմինի մի շարք երկասիրութիւնները եւ ապա հինգ ուրիշ ուսումնասիրական գործեր Պրոֆ. Գր. Խալաթեանցի խմբագրութեամբ եւ «Էմինի ազգագրական ժողովածու» անուան տակ:

Ի յիշատակ հանգուցեալ Գէորգ Քանանեանի Լիկէոնի Խորհուրդը հաստատում է յատուկ ֆոնդ պարգեւատրելու լաւագոյն ուսումնասիրական աշխատանքների հեղինակներին Ռուսաստանում ապրող արեւելեան ազգերի պատմութեան եւ ազգագրութեան վերաբերեալ:

1899 թ. սկսած ձեմարանի վերատեսուչ Պրոֆ. Վ. Միլլէրի նախաձեռնութեամբ Լիկէոնի խորհուրդը ձեռնամուխ է լինում հրատարակելու Լիկէոնի պրոֆեսորների եւ ուսանողների ուսումնասիրութիւնները «Արեւելագիտութեան երկեր» ընդհանուր խորագրի տակ: Մինչեւ 1903 թ. հրատարակուած են 12 հատոր:

Բացի այդ 1899 թուին ձեմարանի պատուակալ Հոգաբարձու իշխան Սիմէոն Սիմէոնովիչ Արամելիք-Լազարեանի դրամական միջոցներով եւ Պրոֆ. Գրիգոր Խալաթեանի խմբագրութեամբ Լիկէոնը հրատարակել է 887 թուի հայկական ամենահին Աւետարանը ըստ այն ձեռագրի, որը ձեմարանի սեպհականութիւնն է եղել:

Միաժամանակ Լիկէոնի պրոֆեսորներն ու դասատուները չափազանց մատչելի դասագրքերի կազմութեան ու հրատարակութեան գործին:

Շատ երկար կը լինէր մի առ մի թուել բոլոր հրատարակութիւնները այդ ուղղութեամբ արուած, բայց, որպէս մի նմոյշ, ասենք, որ 80ական թուականներին լոյս է տեսնում Պ. Ատտայի արաբերէն լեզուի քերականութիւնն ու ընթերցանութեան ձեռնարկը, այնուհետեւ Միրզա Ջաֆարի հէգինակութեամբ պարսկերէն լեզուի քերականութիւնն եւ ռուս-պարսկական խօսակցութեան ձեռնարկը եւ այլն:

Լիկէոնի կրթական գործի յաջողութիւնը պահանջում էր նաեւ ունենալ ճոխ գրադարան, արեւելեան եւ եւրոպական լեզուներով գրքերի, որոնցից կարողանային օգտուել թէ ուսանողները եւ թէ պրոֆեսորները: Այս գործին Լիկէոնը ձեռնամուխ է լինում սկզբից՝ 1872 թուից, աստիճանաբար միջոցներ հայթայթելով ու ճոխացնելով գրադարանը: Միաժամանակ գրադարանը ստացել է նաեւ նուէրներ՝ Մ. Էմինից՝ 1280 անուններ 2505 հատոր, Գ. Քանանեանից՝ 917 անուններ 1388 հատոր եւ այլն:

Գրադարանը 1902 թուին ունէր ընդամէնը գրքեր՝ 7610 անուններով 13·737 հատոր: Ծախսուած է գրքերի գնման համար՝ 35·272 ռուբլի:

Շնորհիւ Գ. Քանանեանի ջանքերի գրադարանի համար կառուցուել է 1896 թ. յատուկ շէնք, որի համար դրամական միջոցներ տրամադրել է Գրիգոր Էմմանուիլովիչ Մանուկ Բէյը:

Լիկէոնի գրադարանից օգտուել են ո՛չ միայն Լիկէոնի ուսանողներն ու պրոֆեսորները, այլ եւ կոչմնակի մարդիկ՝ համալսարանների ուսանողներն ու պրոֆեսորները, Մոսկուա ժամանած գիտնականները: Պահանջել են գէպքեր, երբ գրադարանից գրքեր են ուղարկուած եղել այլ քաղաքներ եւ այլ հաստատութիւններին, ինչպէս, օրինակ, Կազան քաղաքի Հոգեւոր Ակադեմիային, Կազան քաղաքի համալսարանին եւ այլն:

Լիկէոնի պրոֆեսորները միաժամանակ հրատարակել են բազմաթիւ մեծարժէք գիտական աշխատանքներ՝ ինքնուրոյն ուսումնասիրութիւններ եւ թարգմանական, ռուսերէն, հայերէն եւ եւրոպական լեզուներով[6]:

[6] Տե՛ս մանրամասն ցուցակը «Լ. ձ. 30ամեակը», էջ 111—114, 125—127, 140—142:

Հայ պրոֆեսորներից՝

Մկրտիչ Էմինը ունի 42 գործ.
Գէորգ Քանանեանը՝ 6 գործ.
Ստ. Նազարեանցը՝ 14 գործ.
Գր. Խալաթեանցը՝ 29 եւ 16 իր խմբագրութեամբ
Լեւոն Մսերեանցը՝ 35 գործ.

*

Որպէս ամփոփումն Լիկէոնի կատարած խոշոր դերի մասին, առաջ ենք բերում վերատեսուչ Պրոֆ. Վ. Միլլէրի ճառի եզրափակման խօսքը, ասուած 1902 թ. Լիկէոնի 30ամեակի առթիւ կազմակերպուած հանդէսին.

«Մասնագիտական դասընթացների (Լիկէոնի) 30ամեայ պատմութիւնը ապացուցանում է, որ այն դրամական միջոցները, որ պետութիւնը բաց է թողնում ուսուցչապետների ու դասախօսների պահպանութեան համար, միանգամայն արդիւնաւէտ կերպով են ծախսուել, քանզի նրանք ամենայն բարեխղճութեամբ են կատարել իրենց պարտականութիւնները եւ պատրաստել են բաւական թուով օգտաւէտ գործիչներ պետութեան համար թէ Ռուսաստանի սահմաններում եւ թէ մահմեդական Արեւելքում:

«Իր հերթին Լազարեան ձեմարանը, պահպանելով իր հիմնադիրների աւանդները, 30 տարուայ ընթացքում ծախսել է մեծ գումարներ պահպանելու Լիկէոնը, մատակարարելով շէնքին վառելիք, լուսաւորութիւն, նորոգութիւններ կատարելով եւ այլն. տրամադրել է իր դիւանը, իր ծառայողներին եւ կառուցել է գրադարանի համար յատուկ շէնք: Նուազագոյն գնահատանքով այդ գումարը, ծախսուած 30 տարուայ ընթացքում, 200·000 ռուբլուց աւելի է:

«Այսպէս, ժողովրդական լուսաւորութեան Նախարարութեան եւ Լազարեան ձեմարանի միացեալ միջոցներով ապահովուել է մեր համեստ հաստատութեան բարգաւաճումը, որն ըստ իր կարողութեան բաւարարել է թէ պետութեան կարիքները, մատակարարելով արեւելագէտ-պաշտօնեաներ եւ թէ ընդառաջել հասարակութեան ձգտումներին՝ ուսումնասիրել արեւելեան լեզուները եւ գարկ տալ ռուս արեւելագիտութեանը[7]»:

[7] Տե՛ս «Լ. ձ. 30ամեակը», էջ ԻԱ—ԻԲ:

ՅԱՒԵԼՈՒԱԾ

Լազարեանների դրամական նուիրատուութիւնները ձեմարանին:

1· Յովհաննէս Ղազարեան Լազարեանի կտակով թողած որպէս անձեռնմխելի գումար՝ 200·000 ռ. թղթադրամ կամ	ռուբլի 57·142	արժէք 85⁵/₇
2· Յովակիմ Ղազարեան Լազարեանը ձեմարանի շէնքի կառուցման եւ այլ պէտքերի համար (3 նուագով)	65·210	53
3· Յովհաննէս Ղազարեան Լազարեանի կինը՝ Կոմսուհի Կատարինէ Լազարեանը կտակով	2·857	14²/₇
4· Մինաս Ղազարեան Լազարեանը (2 նուագով)	10·603	84⁴/₇
5· Յովհաննէս Յովակիմեան Լազարեանց եւ Խաչատուր Յովակիմեան Լազարեանը (18 նուագով)	502·437	55½
6· Խաչատուր Լազարեանի կինը՝ Կատարինէ Էմմանուէլեան Լազարեանը (5 նուագով)	24·530	95
Ընդամէնը	662·782	75

Բացի այդ Խաչատուր Լազարեանը ձեմարանի 50 ամեակի առթիւ նուիրաբերել էր՝ 200·000 ռուբլի:

Այս բոլորի հետ միասին Լազարեանները հոգացել են բոլոր ծախսերը՝ ա. մատենադարանի համար, որ առ 1865 թ. ունէր 6·000 հատոր գիրք, բ. հանքաբանական կաբինետի կազմութեան համար, ինչպէս եւ ֆիզիքայի, մաթեմատիկայի զանազան գործիքներ գնելու, գ. նկարներ, պատկերներ, հին դրամներ եւ այլն:

ԱՆՈՒԱՆԱՑԱՆԿ

ԼԱԶԱՐԵԱՆ ՁԵՄԱՐԱՆԻ ՇՐՋԱՆԱՒԱՐՏՆԵՐԻ 1820—1916 ԹԹ., ՀԱՆԴԵՐՁ ԻՐԵՆՑ ՀԱՄԱՌՕՏ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ.

Ներկայացնելով այս համառօտ անուանացուցակը մենք, ի հարկ է, նպատակ չենք ունեցել տալու լրիւ ցանկը. դա նաեւ հնարաւոր չէ ու աննպատակ, քանզի ձեմարանի շրջանաւարտների թիւը հասնում է հազարների: Մեր նպատակն էր այս շատ համառօտ ցանկով ազատ գաղափար տալ այն հսկայական կրթական ու ազգային-հասարակական դերի մասին, որ կատարել է Լազարեան ձեմարանը իր 100ամեայ գոյութեան ընթացքին թէ ռուս պետական եւ թէ մանաւանդ հայ կեանքի բոլոր մարզերում:

© National Library of Armenia

Այս անուանացուցակը կազմելիս մենք օգտուել ենք հետեւեալ աղբիւրներից.

1. «Լ. Ճ. 50ամեակը», 2. «Լազ. Ճեմարանի 75ամեակը» ռուսերէն պաշտօնական հրատարակութիւններից, 3. Պրոֆ. Զինովիեւի «Լազ. Ճեմ. համառօտ պատմութիւնը» (ռուսերէն) եւ 4. Մսեր Մսերեանցի «Յիշատակարան»ից:

Այնուհետեւ քաղել ենք տեղեկութիւններ բազմաթիւ գրքերից, ուր եղել են յիշատակութիւններ Լազ. Ճեմարանի շրջանաւարտների մասին. վերջապէս, Թեհրանում գտնուած Ճեմարանի նախկին աշակերտների եւ իմ անձնական յուշերից:

Մեր ցանկութիւնը պահպանել նաեւ ժամանակագրական կարգը նրանց ուսման աւարտելու մէջ, — անհնարին եղաւ, քանզի մեր գլխաւոր աղբիւրների մէջ շատ սակաւ են նման ցուցմունքները:

1. Յակոբ Արզանեան

2. Դաւիթ Արզանեան

Համալսարանաւարտ: Յակոբը եղել է տեսուչ Ներս. դպրոցի՝ 1830—1835 ու նաեւ 1857—1858 թ. լեզուագէտ՝ գիտնականի համբաւով: 1827ին երկուսը միասին գրել ու հրատարակել են՝ «Հայոց թագաւորութեան մի փոքր»: «Դարաստան հատուկտոր գրուածոց Հայ Մատենագրաց ի պատս ընթերցանութեան եւ թարգմանութեան ի Հայ լեզուէ ի Ռուս»: 1838 թ. Թիֆլիս: Դաւիթը եղել է 1848 թ. Ներս. դպրոցի Հոգաբարձութեան անդամ:

3. Աստուածատուր Արարատեան

Աշակերտել է Ամդարեանին Լ. Ճեմարանում, ապա ուսուցիչ Ներս. դպրոցի. 1823 թ. ապա Յովակիմն էր ուղարկել Ներսէս Աշտարակեցուն, այդ ժամանակուայ Առաջնորդին:

4. Ներսէս Արարատեան

Աշակերտել է Ամդարեանին Լ. Ճեմարանում. 1824—1830 թթ.ին ուսուցիչ Ներսես. դպր. Աւանդել է՝ հայերէն, ռուսերէն եւ վայելչագրութիւն: Սրան եւս ապա Յովակիմն էր ուղարկել Ներսէս Աշտարակեցուն 1823 թ.:

5. Յովհաննէս Ալդաղանեան

Աշակերտել է Ամդարեանին Լ. Ճեմարանում. Ուսուցիչ Ներս. դպր.: Սրան եւս ապա Յովակիմն էր ուղարկել Ներսէս. Աշտարակեցուն:

6. Գաբրիէլ Երեցփուխով

1854 թ. կազմել ու հրատարակել էր «Ռուս–Հայկական բառարանը»:

7. Սիմէոն Սուլթանշահեանց

1831 թ. Հեղինակ՝ «Գաղափար Հայկական վայելչագրութեան». գծագրեաց Սիմէոն Սուլթանշահեանց, ի լոյս էած Հայկական Ճեմարան Տեարց Լազարեանց, որ ի Մոսկով: Հետագայում գօրավար Պետերբուրգում. որ մեծապէս նպաստեց, Նալբանդեանի խնդրանօք, «Հիւսիսափայլի» կառավարական թոյլտուութիւնը առնուելուն:

8. Յովհաննէս Եղիազարեան

9. Միքայէլ Պատկանեան

1839 թ. հրատարակել է՝ «Քերականութիւն Հայոց լեզուի»: Մոսկուա: Ուսուցիչ, թատերագիր, Հայ թատրոնի հիմնադիրներից մէկը: Կովկասեան գօրաբանակի Պարենաւորման քննիչ:

10. Խաչատուր Դաւթեանց 1852/07

Բժիշկ Թիֆլիսում:

11. Յովսէփ Ջերբէզեան

Աշակերտել է՝ Սալլանթեանին: 1833 թ. հրատարակել է՝ «Սկզբունք քրիստոնէական վարդապետութեան»: Մոսկուա: Կատաղի հակառակորդ Ս. Նազարեանի եւ նոյնքան կատաղի պաշտպան գրաբարի: Հեղինակ՝ «Դասագիրք Հայոց պատմութեան», 1861 թ. Թէոդոսիա:

12. Մկրտիչ Էմին 1829 աշնան. եւ աւարտել է 1834 թ.

Համալսարանաւարտ 1838 թ. Ն. Զուզպեցի: Կալկաթայից եկած Ճեմարան: Այնուհետեւ 1838 թուից ուսուցիչ Հայոց լեզուի Ճեմարանում տեսուչ՝ 1850—1860 թ. Հետագայում Պրոֆ. Ճեմարանի Լիկէոնում՝ հայագիտութեան դասախօս: Աւելի մանրամասն տեղեկութիւնները գրուած են առանձին՝ Յաւելուածում: Վիճ. 1890 թ. Դեկտ. 13ին:

13. Յարութիւն Ալամդարեանց
(քահանայ, յետոյ վարդապետ)

Ուսուցիչ Լազ. Ճեմարանում: 1842 թ.ից տեսուչ Ներս. դպրոցի: Լեզուագէտ ու գրականագիտական օժտուած: Խոշոր դեր է կատարել Եփրեմ կաթողիկոսի օրօք եւ Ներսէս Աշտարակեցու առաջնորդութեան ժամանակ: Աքսորուել է Հաղբատ, յետոյ անցել Բիւրինեւ եւ ապա Ս. Խաչ վանքը, ուր սպանուել է 1834 թ. Հեղինակ՝ ա. «Համառօտ բառարան ի Ռուսաց լեզուէ ի Հայ»: Մոսկ. 1821 թ.: բ. «Հրահանգ քրիստոնէական վարդապետութեան ի պէտս մանկանց Հայաստանեայց սուրբ Եկեղեցւոյ»: 1825 թ. Թիֆլիս:

14. Միքայէլ Միանսարեան 1849/50
(*Հետագայում զինուորական*)

Հեղինակ գծած տեսարակների, որ այնուհետեւ գործածութեան մէջ է մտել մեր դպրոցներում: Լոյս է ընծայել՝ ա. «Կանոնաւոր եւ վայելուչ գրութեան պատմութիւնը ու տեսութիւնը: Ծրագրական փորձառութիւն հանդերձ զանազան ծանօթութիւններով, յաւելուածներով եւ գրասեղանների ու անատոմիկական ստուերագրերով: Պետերբուրգ, 1872: բ. «Հայկական կանոնաւոր եւ վայելուչ գրութիւն»: Լայպցիգ. 1873. Միաժամանակ հրատարակիչ հետեւեալ գործերի: ա. «Ազգային կրթութիւն, հրապարակային ընթերցանութիւնք Էդուարդ Լարուլէի. թարգման. Մ. Տէր–Գրիգորեանի: 1867. բ. «Մնամատարութիւն երեխայոց մարմնական եւ բարոյական. շարագրութիւն Կոմրի, անգլիացոց թագուհու բժշկի եւ Էդինբուրգի արքունի բժշկական համալսարանի անդամի»: Պետերբուրգ 1868. գ. «Քնար Հայկական»ի Հրատարակիչ: դ. Հեղինակ «Bibliographia»ի ուր հաւաքուած են այն բոլոր գրուածքների անունները, որոնք վերաբերում են Կովկասին եւ Անդրկովկասին:

15. Ռափայէլ Պատկանեան 1848/49

Բանաստեղծ «Գամառ Քաթիպա»: Աշակերտել է Մ. Էմինին:

16. Սերովբէ Պատկանեան 1848/49

Ուսուցիչ եւ բանաստեղծ:

17. Կարապետ Եգեան (Էգով) 1850/51, 1852/53

Պետական բարձր պաշտօնեայ: Հեղինակ ռուսերէն լեզուով «Պետրոս Մեծի յարաբերութիւնները հայ ժողովրդի հետ» արժէքաւոր գրքի ու նաեւ՝ «Ս. Էջմիածնի եւ Ռուսաց կառավարութեան յարաբերութիւնների ծագումը», Թիֆլիս 1905. Պահպանողական, մոլեռանդ լուսաւորչական, նուիրուած հայ եկեղեցուն:

18. Ալէքսանդր Ռոտինեանց 1850/51

Թիֆլիսեցի: Դորպատի համալսարանը աւարտած (1852—1856). Գիւղատնտես: Պետական պաշտօնեայ: Հանրային գործիչ: Ունի գրած յիշողութիւններ Դորպատի հայ ուսանողների կեանքի մասին:

19. Գէորգ Հախվերդեանց

«Սայաթ Նովայի» Հրատարակիչը 1852 թ.: Աշակերտել է Մկրտիչ Էմինին:

20. Գրիգոր Աղափիրեանց 1848/49

Համալսարանաւարտ–Դորպատում (1849—1851): Ս. Էջմիածնի միաբան: Եպիսկոպոս եւ ապա առաջնորդ Վերին Ագուլիսում:

21. Պետրոս Շանշեանց (*Ճեմարանում մինչեւ 1855 թ. սովորողների ցուցակի մէջ է գտնուում*):

Համալսարանաւարտ: 1849 թ. տեսուչ Ներս. դպրոցի: «Լուսամիտ, լոյն հայեացքների, գաղափարական մարդ, մեղմ բնաւորութեամբ եւ հաստատ համոզումներով»: Հեղինակ՝ «Համառօտութիւն քրիստոնէական ուսման Հայաստանեայց առաքելական Ս. Եկեղեցւոյ» եւ «Ուսումն. պարտուց». Պոլիս եւ ապա Երուսաղէմ՝ 1873—1874 թ.:

22. Սարգիս Տիգրանեանց

1830ին աւարտ. Համալսարանը: Այնուհետեւ եղել է ուսուցիչ Լ. Ճեմարանում, Նոր–Նախիջեւանի գաւառական դպրոցներում, Սիմֆերոպոլի Գիմնազիայում եւ տեսուչ Խալիպեան դպրոցի: Վախճ. Եյսկում (Հիւս. Կովկ.) 1875 թ.:

23. Զարմայր Մսերեանց 1852/53, 1854/55

1859 թ. հրատարակել է՝ «Հայերէն պատկերազարդ այբբէնարան», իսկ 1863 թ.՝ «Հայ եւ ռուս այբբէնարան» Մոսկուա: Խմբագիր «Ճռաքաղ»ի եւ «Փարոս Հայաստանի» կիսամեայ հանդէսի, 1879—1881 թ.: Նաեւ խմբագիր ռուս. «Համբաւաբեր Ռուսիոյ» հանդէսի:

24. Քրիստափոր Յովհաննիսեան (Քուչուկ) 1854/55, 1875

Ուսուցիչ Հայոց լեզուի Լ. Ճեմարանում: Հեղինակ բազմաթիւ գիտական աշխատանք-

© National Library of Armenia

Ներքի Հայաստանի պատմութեան եւ հնագիտութեան մասին։

25. Մանուկ Սադաթեան 1857/58

Վերակացու Լ. Ճեմարանում. Լերմոնտովի «Դեւ» պոէմայի անզուգական թարգմանիչը։

26. Սմբատ Շահազիզ 1859/60, 1861/62

Բանաստեղծ։ Հեղինակ «Լեւոնի վիշտը» պոէմայի, «Հրապարակախօս ձայն»ի, «Սմառնայեն նամակների», «Ազատութեան ժամքը» բանաստեղծութիւնների եւ այլն։ Նախ՝ վերակացու Լ. Ճ. եւ յետոյ բազմամեայ ուսուցիչ Հայոց լեզուի Լ. Ճեմարանում մինչեւ 1897 թ.։ Աշտարակեցի։ Աշխատակից «Հիւսիսափայլ»ի։ Վախճ. Մոսկուայում 1907 թ. դեկտ. 24ին, 67 տարեկան հասակում։

27. Յովհաննէս Տէր-Յակոբեան 1859/60, 1861/62

Ս. Շահադիզի մաերիմ բարեկամը Ճեմարանից սկսած. դասընկերներ են եղել։ Հետագայում Բաքուի նաւթարդիւնաբերողներից։

28. Սեդրակ Մանդինեան 1857/58—1869/63

Մանկավարժ։ 1876 թ. տեսուչ Ներս. դպրոցի, ապա Շուշու եւ Երեւանի թեմ. դպրոցների, դասախօս Գէորգեան Ճեմարանի եւ գրական գործիչ։ Վախճ. 72 տարիքում 1915 թ. նոյեմբ. 28ին։ Հեղինակ՝ ա. «Դպրոցական սահմանագրութիւն», բ. Մանկավարժական տարակուսանքներ մեր մէջ», գ. «Ուսման նախագիծ ազգ. ուսումնարանների համար» եւ այլն։

29. Ամիր Թաւրիզեան — Ամիր-Դովլաթ 1862/63

Պարսկահայ, թարգման Պարսից շահի արքունիքում։

30. Յովսէփ Օրբելի (*քահանայ*)

Հեղինակ՝ «Համառօտութիւն Սրբազան Պատմութեան, հանդերձ համառօտ բառարանիւ ի Հայ լեզուէ ի ռուս վասն բառից ի սմա պարունակելոց, ի պէտս հայազգի մանկանց. աշխատասիրեաց Տիրացու Յովսէփ Տէր-Յովակիմեան Օրբելի, որ աշակերտեցաւ ի Տեարց Լազարեանց Հայկական Ճեմարանին Արեւելեան լեզուաց»։ Մոսկուա. կրօնուսոյց Թիֆլիսի գիմնազիոնում։

31. Գէորգ Դոդոխեան 1852

Ուսուցիչ Ներս. դպրոցի եւ ապա տեսուչ նոյն դպրոցի։ Համալսարանաւարտ։ Ծն. 1831 թ. Սիմֆերոպոլ քաղաքում. Հեղինակ՝ «Երգ պանդուխտ պատանեկի (Ծիծեռնակ) 1854 թ. Դորպատում։

32. Ոսկան Յովհաննիսեանց

Լ. Ճեմարանի Հայոց լեզուի ուսուցիչ, որին փոխարինեց Մ. Նալբանդեանը 1853 թ. Հեղինակ՝ ա. «Սմրատի Հայաստանի պատմութիւնը». Մ. 1856 թ. բ. «Կիրակոսի Հայաստանի պատմութիւնը» Մ. 1858. գ. «Հայաստանի նոր քնարը», երգերի ու բանաստեղծութիւնների ժողովածու 1855 թ. Մոսկ. գ. Դասագիրք պարսկերէն լեզուի։

33. Իսմայիլ (Ստեփան) խանի որդիք եւ եղբօրորդիք (*անունները անյայտ են*)։

Եղել են թարգմանիչներ Պարսից Շահերի արքունիքում։ Պարսկահայեր։

34. Աբգար Սարգիսեան 1864/65

Թարգման Նասրէդդին Շահի մօտ։ Ունի ռուսերէնից հայերէնի թարգմանական աշխատանքներ։ Ն. Զուղայեցի։

35. Մարտիրոս Դաւիթխանեան (Ամիր-Թուման) 1864/65

Զօրավար. Պարսկաստանի զինուորական շտաբի պետ։

36. Յովհաննէս Միրաքեան

Պետական խորհրդական Թիֆլիսում։ Այնուհետեւ Ս. Էջմիածնի դատախազ (պրոկուրոր)։

37. Ստեփան Մատինեան

Ս. Էջմիածնի պրոկուրորի տեղակալ։ 1848 թ. եղել է Ներս. դպր. հոգաբարձութեան անդամ։

38. Գէորգ Սուրէնեանց 1850/51, 1852/53

Ուսուցիչ Լ. Ճեմարանի։

39. Գալուստ Զարիխով

Ն. Նախիջեւանի Հայոց Հոգեւոր թեմ. դպրոցի բեկտոր։ Հասարակական գործիչ։ Ն. Նախիջեւանի ինքնավարութեան անդամ։

40. Գրիգոր Զալխուշեան

Փաստաբան։ Հասարակական անուանի գործիչ։ Ն. Նախիջեւանի քաղաք. ինքնավարութեան անդամ։

41. Գրիգոր Կարախանեան 1886

Գրաքննիչ Թիֆլիսում 1890 թ.։

42. Գալանքար Գալանքարեան

Պաշտօնեայ Շուշու դատաստանական հիմնարկներում։

43. Տէր Ստեփան Տէր-Ստեփանեան

Աւագ քահանայ Գորիում։

44. Աղէքսանդր Մատինեան 1850/51

Ճեմարանի 50ամեակի առթիւ, 1865 թ. նուէր էր ուղարկել Ճեմարանին հին ձեռագիրներ՝ 74 հատ եւ գրքեր, գնուած Թիֆլիսում մի շարք քաղաքացիների եւ նախկին սաների միջեւ հանգանակուած դրամարով. նուէրը ուղարկուած էր մի սրտառուչ նամակի հետ, որի տակ ստորագրել էր ինքը։

45. Աստուածատուր Արարատեան

Ուսուցիչ եւ ապա պաշտօնեայ Էջմիածնի Սինոդի եւ Կոնսիստորիայի։ Յայտնի Յարութիւն Աստուածատուրեան Արարատեանի (Վաղարշապատցի), իսկական պետական խորհրդականի՝ եղբօր որդին էր։ Ինքը Յարութիւն Արարատեան շատ մօտ է եղել Լազարեանց մեծահռչակ գերդաստանին։ (Տե՛ս «Յարութիւն Արարատեանի կեանքը», էջ թ.)։

46. Տէր-Աստուրեան

Գեներալ-լեյտենանտ։

47. Լեւոն Խօջայեանց

Ուսուցիչ Էջմիածնի Գէորգեան Ճեմարանում։

48. Նիկողայոս Մառ

Հռչակաւոր արեւելագէտ, Հայագէտ եւ վրացագէտ, հիմնադիր Յարեթարանութեան տեսութեան լեզուագիտութեան մէջ։ Պրոֆ. Պետերբուրգի համալսարանի արեւելագիտական մասնաճիւղում՝ իբրեւ հայագիտութեան ու վրացագիտութեան ամբիոնի դասախօս։

49. Յովհաննէս Յովհաննէսեան

Բանաստեղծ ու նաեւ ուսուցիչ Էջմիածնի Գէորգեան Ճեմարանում 1890 թ.։

50. Աստուածատուր Պիտանեանց 1889

Ուսուցիչ Էջմիածնի Գէորգեան Ճեմարանում 1890 թ. եւ ապա հարկերի տեսուչ։

51. Վարդգէս Սուրէնեանց

Նկարիչ։ Ուսուցիչ Էջմիածնի Գէորգեան Ճեմարանում 1890 թ.։

52. Սիմէոն Շահնազարեան

Բժիշկ։ Եղել է 1897—1898 թ. ուսումն. տարում, կարճ ժամանակով Երեւանի Հայոց թեմ. դպրոցի տեսուչ։

53. Լեւոն Մաերեանց

Բարբառագէտ։ Դասախօս Լ. Ճեմ. Լիկէոնում։ Հեղինակ բազմաթիւ գիտ. աշխատութիւնների։

54. Պետրոս Սիմէոնեանց 1850/51

Ն. Նախիջեւանցի։ Դորպատի համալս. աւարտած 1851—1853 թ.։ Դպրոցական գործիչ։ Խմբագիր «Մեղու Հայաստանի» 1863 թ. Ղեկավար դէմք պահպանողական ուղղութեան։

55. Համբարձում Փափազեանց 1848/1849

Կ. Պոլսեցի։ Աւարտել է Դորպատի համալսարանը 1849—1851 թթ.։ Յետագային հոգեւորական։

56. Քերովբէ Պատկանեան 1849/50

1843 մտել է Ճեմ. եւ աւարտել 1850ին։ Աշակերտել է Մ. Էմինին։ 1851 թ. մտնում է Դորպատի համալսարանը, բայց չի աւարտում։ 1857 թ. աւարտում է Պետերբուրգի Մանկավարժական Ճեմարանը։ Ուսուցիչ Թիֆլիսում։ 1861 թ. նշանակւում է Պետերբուրգի համալսարանի Արեւելեան մասնաճիւղի Հայոց լեզուի դասախօս։ Դր. եւ պրոֆեսոր հայագիտութեան։ Ունի բազմաթիւ գիտական ուսումնասիրական աշխատանքներ նուիրուած գլխաւորապէս Հայոց լեզուին եւ Հայոց պատմութեան։ Հիմնադիր հայ բարբառագիտութեան։ Ծն. Ստաւրապոլում 1833 թ. եւ վախճ. 1889 թ. ապրիլ 2ին։

57. Ատամանեան Կոստանդին 1893/94, 1898

Ուսուցիչ Բաքուում։

58. Բահաթրեանց Առաքել 1874

Փոխ վերատեսուչ Ն. Նախիջեւանի հոգ. թեմ. դպրոցի։

59. Աթեանց Խաչատուր

Աւարտել է Մոսկ. համալսարանը։ Բժիշկ Թիֆլիսում։ Ծնած Վերին Ադուլիսում։

© National Library of Armenia

60. Արիստակէս (Ռուստէմ) Զարդարեան

Ծն. Գողթան գաւ. Ն. Ագուլիսում: Ձեմարանը աւարտելուց յետոյ աւարտել է Մ. համալսարանը բժշկ. մասնաճիւղը: Բժշկութեամբ պարապել է Թիֆլիսում եւ ձեռք բերել մեծ հռչակ: Հրաւիրուել է որպէս Ն. Կ. Մ. Միխայիլ Նիկոլաեւիչի պալատական բժիշկ. այդ պաշտօնում մնացել է մինչեւ 1905 թ. յեղափոխութիւնը: Յայտնի էր որպէս շատ համակրելի հասարակ. գործիչ. եղել է Կովկասի Հայոց հրատարակչ. ընկերութեան վարչութեան անդամ: Երկու տարի բժշկութիւն արել Թաւրիզում ու յետոյ վերադարձել նորից Թիֆլիս, ուր եւ վախճանուել է: Ունէր նկարչութեան շնորհք: Գրել է մի քանի գրքոյկներ զօկերի բարբառով:

Մարդասէր, ազգասէր եւ մասնաւորապէս քնքուշ զգացումներ էր տածում դէպի Գողթանն ու գողթանցիները:

61. Անանիա Սուլթան Շահ 1853/54

Բժիշկ: Հասարակ. գործիչ: Աշխատակից «Հիւսիսափայլ»ի: Հեղինակ՝ «Հայոց ազգի լուսաւորիչք» վիպական գրուածքի: Վախճանած Ղզլարում 1900 թ.:

62. Սարգիսեան Աբգար 1864/65

Թարգման Նասրէդդին Շահի մօտ: Ունի թարգմանական աշխատանքներ ռուսերէնից՝ հայերէնի: Ն. Զուղայեցի:

63. Սարգիսեան Լեւոն 1873/84

Գողթանի Ցղնա (Ցանանար) գիւղից: Ծն. 1862 թ. Աւարտել է Մոսկ. համալսարանի բնագիտական բաժինը: Ուսուցիչ Լազ. ճեմ. եւ Ներսիսեան դպրոցում (1889 թ.): Հեղինակ՝ «Հին ցաւ», «Ժողովրդակ. կրթութիւնը մեզանում», «Այց Թիւրքաց Հայաստանին»: Տեսուչ Շուշւայ թեմ. դպրոցի: Հեղինակ «Մայրենի խօսք» (Կ. Կուսիկեանի հետ) ընթերցարանութեան ձեռնարկի: Բաղաքագլուխ Ալէքսանդրապոլի (Լենինականի)՝ Սով. իշխ. օրօք: 1921 թ. դեսպան Ս. Հ-ների Թեհրանում: Վախճ. 1926 թ.:

64. Համբարձում Թումանեանց 1877/88

Պարսկաստանի հանրածանօթ Թումանեան Առեւտրական Տան անդամ: Ապրում է Փարիզում:

65. Երուանդ Շահազիզ

1882. *Ն. Նախիջեւանի թեմ. դպրոցի Հայոց լեզուի դասատու: Աչքառու գրական-նագէտ. ունի բազմաթիւ գրական-պատմական-կենսագրական ուսումնասիրութիւններ: Հեղինակ՝ «Մկրտիչ Յովսէփեան Էմին» կենսագրութեան, «Սմբատ Շահազիզ»ի կենսագրութեան (1944 թ.): Ս. Հայաստանում ստացել է «Դոկտոր Փիլոլոգիական գիտութիւնների» կոչումը:*

66. Մկրտիչ Բարխուդարեան 1886/87

Ծն. Գողթանի Վ. Ագուլիս աւանում: Համալսարանաւարտ: Խմբագիր կիսամեայ «Հանդէս գրականութեան եւ պատմութեան»: Լոյս են տեսել եօթ ստուար հատորներ 1888—1896 թթ.: Ունէր տպարան Մոսկուայում 1889 թուից:

67. Կանկանեան

Բժիշկ Կաղզմանում:

68. Մամիկոնեան

Բժիշկ Կաղզմանում:

69. Մակաշեան Սուրէն

Բժիշկ. գործել է Երեւանում, Թեհրանում եւ Իրանի այլ քաղաքներում:

70. Կարապետ Կուսիկեան

71. Մինաս Բերբերեան (80ական թուականներին)

Ն. Նախիջեւանցի:

72. Իւրիյ Վեսելովսկի (80ական թուականներին)

Ռուս գրական գործիչ: Ունի հայ գրականութեան նուիրած մի շարք աշխատանքներ: Անկեղծ ու ջերմ հայասէր:

73. Ալեքսէյ Զիվելեգեան

Աւարտել է Մ. համալս. պատմա-լեզուագիտական մասնաճիւղը: Պրոֆ. պատմութեան: Ունի ռուսերէն լեզուով մի շարք պատմագիտական աշխատանքներ: Ներկայիս Ս. Հայաստանում է աշխատում:

74. Եակուլով Ալէքսանդր

Աւարտել է Մ. համալս. իրաւաբան. մասնաճիւղը եւ ապա որպէս փաստաբան գործել Մոսկուայում:

75. Քալանթարեան Արտեմ 1891

Մի ֆիրմայի ներկայացուցիչ Բաքուում:

76. Բահաթրեան Լեւոն 1891/92, 1895

Աւարտել է Մ. համալս. իրաւաբան: Գործել է Բաքուում:

77. Ամբարդանով Ալէքսիանոս 1900

Պետերբուրգի Պետական Բանկի պաշտօնեայ:

78. Տէր-Սարգիսեանց Ստեփան

(*Ազատ ունկնդիր 1889 թ.*)

Վերակացու Լազ. ճեմ. եւ Դասատու նախակրթարանի առաջին բաժանմունքի Լազ. ճեմարանում:

79. Սեֆերեան Գէորգ

Առեւտրական Միլանս քաղաքում (Իտալիա):

80. Պետրոսեան Ղազարոս 1895, 1898

Պոլսեցի: Լազ. ճեմ. Լիկէոնից յետոյ մտնում է Մ. համալսարանի բժշկական մասնաճիւղը, որը եւ աւարտում է: Գործել է Ռուսաստանի գաւառական քաղաքներում:

81. Ալէքսանդր Ներսիսեան աւ. 1895

Իրաւաբան Մոսկուայում: Աւարտ. Մոսկ. համալս. իրաւաբան մասնաճիւղը:

82. Ստեփան Քաբանակեան աւ. 1895

Աւարտել է Մոսկ. համալս. պատմա-լեզուագիտ. մասնաճիւղը, գրականութեան բաժինը: Ուսուցիչ Ներսիս. դպրոցի ռուսերէն լեզուի: Գնահատուած արտասանող: Թատրոնական գործիչ Թիֆլիսում:

83. Յովսէփ Թադէոսեան 1887—1895

Ծն. Գողթանի Վ. Ագուլիս աւանում 1873 թ.: Սկզբնական կրթութիւնը ստացել է գիւղի ծխ. դպրոցում. Միջնակարգը՝ Լազ. ճեմարանում: Բարձրագոյնը՝ Մոսկ. համալս. պատմա-լեզուագիտական բաժնի պատմական մասնաճիւղը 1900 թ.: Երկու եւ կէս տարի եղել է ուսանող Բերլինի եւ Մինխէնի համալսարաններում, լսել է հասարակական գիտութիւններ ու պատմութիւն: Պաշտօնավարել է, որպէս ուսուցիչ՝ Թիֆլիս քաղաքի Հայոց Յոհաննեան դպրոցում (2 տարի), որպէս տեսուչ՝ Ախալցխայի եւ Բաթումի դպրոցներում: Եղել է ուսուցիչ Լազարեան ճեմարանում (1909—1918): Հ. Հ. Լազարեան ճեմարանում գործել է Երեւանի գաւառական ինքնավարութեան Վարչութեան Նախագահ: 1921—1929 թ. Թաւրիզի Հայոց գիմնազիոնի հիմնադիրներից մէկը եւ ուսուցիչ: 1929—1831 թ. Թեհրանի Հայոց դպրոցում ուսուցիչ: 1931 թ. հիմնադիր եւ առաջին խմբագիր (5 տարի) «Ալիք» թերթի: Խմբագիր՝ «Նաւասարդ», «Լոյս» եւ «Արփի» գրական-գիտական ամսագիրների: Ունի բազմաթիւ գրական ինքնուրոյն ու թարգմանական աշխատանքներ: Աշխատակցել է՝ «Հայրենիք» եւ «Մուրճ» ամսագիրներին, «Հայրենիք», «Ցուսաբեր» եւ «Ցառաջ» օրաթերթերին, «Նոր Գիր» գրական Հանդէսին եւ «Հանդէս Ամսօրեայ» ուսումնաթերթին:

84. Յակոբ (Եաշա) Եակուլով

Աւ. Լազ. ճեմ. եւ Մոսկ. համալսարանի իրաւաբանական բաժինը: Շատ շուտով ձեռք բերել անուանի փաստաբանի անուն Մոսկուայում: Մասնագէտ քրէական իրաւունքի:

85. Մամիկոն Գէորգեան

Ծն. Գողթանում՝ Վ. Ագուլիսում: Աւարտ. Մոսկ. համալս. իրաւաբանական մասնաճիւղը: Ներկայումս՝ Ս. Հայաստանում է գործում:

86. Գարեգին Աթաբէկեան

Ծն. Վ. Ագուլիսում: Աւ. Մոսկ. համալսարանի բժշկական մասնաճիւղը:

87. Պալասանեան Ռուբէն

Բժ. Թեհրանում:

88. Ֆրէնգեան Ալէքսանդր 1899 թ.:

Սկզբ. կրթութիւնը ստացել է Թեհրանի Հայկազեան դպրոցում: 1899 թ. անցել է Լազ. ճեմարան: Երկար տարիներ պաշտօնավարել է Իրանի պետական հիմնարկներում:

89. Մելիք-Յովսէփեան Յարութիւն 1909—1916

Վաճառական Թեհրանում:

90. Յակոբեան Գալուստ 1905—1915

Ճարտարագէտ-մեքենագէտ Թեհրանում:

91. Յակոբեան Սուրէն 1906—1915

Տնտեսագէտ: Գործում է Թեհրանում:

92. Յովսէփ Կուսիկեան

Բարձրագոյն ուսումն. ստացել է Մոսկ. Համալսարանում, աւարտելով պատմա-լեզուագիտական մասնաճիւղը: Ներկայումս գործում է Ս. Հայաստանում: Պատմագիտական աշխատանքներ ունի. աշխատակցում է «Ս. Հայաստան» եւ այլ հանդէսներին Երեւանում:

© National Library of Armenia

93. Դեմետրի Կարապետեան 1909—1917

Ծն. Ն. Զուղայում 1909 թ. Սկզբ. կրթութիւնը ստացել է Ն. Զուղայի ծխական դպրոցում: Լազ. Ճեմ. լիկէոնում սովորել է 1½ տարի (Պր. Մառի եւ Օրբելիի ժամանակ), յետոյ անցել Մոսկուայի Պետ. Երաժշտանոցը: Նուագում է թաւ ջութակի վրայ: Ներկայիս՝ Թեհրանի Երաժշտանոցի թաւ ջութակի դասատուն է:

94. Գուրգէն Տէր-Մկրտչեան 1909—1916

Իրաւաբան: Գործում է Թեհրանում որպէս առեւտրական-արդիւնաբերող: (Ունի կարտօնաժի գործարան:)

95. Միքայէլ Մանդինեան

Թիֆլիսեցի: Բժիշկ: Վիճ. արտասահմանում:

ՀՐԱՉԵԱՑ Յ. ԱՃԱՌԵԱՆ

Լեզուաբանութիւնը տարւոյս ապրիլ 16ին, Երեւան, կորսնցուց արդիւնաշատ վաստակաւոր մը յանձին Հ. Յ. Աճառեանի: Բայց ան իբրեւ մէկը բազմավաստակ լեզուաբաններէն, կը պահէ իր արժանաւոր տեղը լեզուաբանական գիտութեան պատմութեան մէջ:

1. ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Աճառեանի առաջին 35 տարիներու համար ունիմ հետեւեալ կենսագրական գծերը իր իսկ կողմէ գրուած (փակագծի մէջ առնուած թուականները ինձմէ են):

«Հրաչեայ Աճառեան, որդի կօշկակար Յակոբի, ծնաւ 1876 թուի մարտ 8ին Պօլիս՝ Սամաթիոյ Նոր-թաղը: Նախնական կրթութիւնը առաւ Սամաթիոյ Արամեան մասնաւոր վարժարանին մէջ եւ յետոյ թաղային Ս. Սահակեան վարժարանը: Աւարտելէն յետոյ մտաւ Կեդրոնական Վարժարանը (1889), ուրկէ չրջանաւարտ եղաւ 1893ին: Մէկ տարի Կեդրոնականի նախակրթարանին եւ Գասըգիւղի Արամեան վարժարանին մէջ (1893—1894), մէկ տարի ալ Կարնոյ Սանասարեան վարժարանին մէջ (1894/5) ուսուցչական պաշտօն վարելէ յետոյ, 1895 թուին գնաց Փարիզ՝ լեզուաբանութիւն սովորելու համար: Հետեւեցաւ Սորպոնի (Ecole pratique des Hautes-Etudes) եւ Գոլէժ-տը-Ֆրանսի դասախօսութեանց: Իր գլխաւոր ուսուցիչն եղաւ Ֆրանսացի հայագէտ Meillet, որուն ջերմեռանդ հետեւող մը եղաւ այնուհետեւ: 1898 թուին աւարտեց Սորպոնը եւ անցաւ

ՀՐԱՉԵԱՑ Յ. ԱՃԱՌԵԱՆ †

Սթրազպուրկ հետեւելու հայագէտ Հիւպշմանի դասախօսութեանց: Նոյն թուի ամառը՝ կոտորածներու պատճառով չկրնալով վերադառնալ հայրենիք, անցաւ Կովկաս եւ այն օրէն սկսեալ զանազան քաղաքներու մէջ կը վարէ ուսուցչական պաշտօն. այսպէս Էջմիածնի Ճեմարանը (1898—1902), Շուշի, թեմական Դպրոցը (1902—1904), Թաւրիզի Արամեան Վարժարանը (1904—1906), Նոր-Բայազէտի Ծիսական Դպրոցը (1906—1907) եւ Նոր Նախիջեւանի Թեմական Դպրոցը» (1907—1918):

1918 ամառը կ'արձանագրուի Հայ Կամաւորներու թուին մէջ, որ կը մեկնէր Նոր Նախիջեւանէն Կովկասեան ճակատ: Նորակազմ բանակը ճեպընթաց քայլերով կը հասնի Նովորասիսկ, երբ կը հռչակուի զինադադարը: Կը ցրուի բանակը: Աճառեան մեծ զրկումներով ապաստանարան կը գտնէ Պարսկաստան: 1918—1919 ուսումնական տարւոյն կը պաշտօնավարէ Թեհրանի Հայոց վարժարանին մէջ: 1920, նոյեմբեր 26ին կը գրէր ինձ Թաւրիզէն. «Ես ալ երկրէ երկիր ինկայ. ամէն ինչս կողոպտուեցաւ. զրադարանս մնաց Ռուսով եւ չեմ գիտեր, թէ ո՞ղջ է թէ այրուած. մինակ ձեռագիր աշխատութիւններս կրցայ փախցնել. ուրիշ ամէն բան կորսնցուցի. Տէր ետ, Տէր էառ»:

1923ին կը հրաւիրուի Հայկական Համարսարանէն Երեւան իբրեւ ուսուցչապետ Լեզուաբանութեան: 1935ին կ'անուանուի «Հայկական Հանրապետութեան Գիտութեանց Վաստակաւոր Գործիչ». Զեխոսլովակիայի Ակադեմիայի Արեւելեան Բաժնին թղթակից անդամ. 1943ին «Հայկական Հանրապետութեան Գիտութեանց Ակադեմիայի իսկական անդամ» եւ «Սովետական լեզուաբանութեան իսկական ներկայացուցիչ»:

1925ին, յունիս 20ին կը կորսնցնէ իր կինը Տիկին Արուսեակ, որ եղած էր իրեն աշխատակից արտագրութիւններով:

1932 նոյեմբերին կը հիւանդանայ ծանրապէս. 1933 յունուար 10ին կը հաղորդէր ինձ. «...վրայ հասաւ բաւական ծանր հիւանդութիւն մը: Երկու շաբաթ տունը պառկելէ յետոյ ինձ հիւանդանոց փոխադրեցին: Երկու շաբաթ ալ հոն պառկեցայ եւ դուրս եկայ այցելու հիւանդ լինելու պայմանով: Հիմա լաւ եմ, ապաքինեալ, բայց ոչ լիովին կազդուրեալ»: Կը ցաւէր, որ այս պատճառաւ Արմատական Բառարանին Զ. հատորի հրատարակութիւնը երկու ամսոյ յապաղում կրած էր. ի գլուխ եկած «1932, դեկտ. 21, ժ. 10 եր(եկոյեան)»:

1936ին կ'ամուսնանայ Օր. Սոֆիայի հետ: Կ'որդեգրէ դուստր մը Քնարիկ անուն, որ կը խոստանայ հետեւորդ մ'ըլլալ իր հօր լեզուաբանական ուսմանց մէջ:

Աճառեան կը շարունակէ իր դասախօսութիւնները մինչեւ մահը:

Վաղուց դադրեցուցած էր Աճառեան իր մեղրագործ գործունէութիւնը. լի էր իր փեթակը մեղրով: Կը մնար անտիպ ստեղծագործութիւնները վերջին սրբագրութեամբ հրապարակ հանել: Պահած էր ան իր կորովը. 1924էն սկսեալ եռեւ եռեւ լոյս տեսան իր աշխատասիրութիւնները, նախ ապակեփակ եւ ապա տպագիր: Մամուլի տակն էր Համեմատական Քերականութեան Բ. հատորը, երբ հասաւ իրեն մահը, 77 տարեկան հասակին. ան գոցեց ապրիլ 16ին առ յաւէտ պրպտող աչքերը, որոնք արդէն սկսած էին կորսնցնել արեւի լոյսը:

Նկարագիրը:

Աճառեան ծնունդն էր խոնարհ յարկի: Հայրը համեստ կօշկակար մը, իր արհեստով կը հայթայթէր 6 անդամէ բաղկացած ընտանիքը: Զոհողութիւնը, զոր կ'ընէր զաւակներու կրթութեան, վեր էր իր ոյժերէն: Հրաչեայ փոքր հասակէն ընտելացաւ սակաւապետութեան: Ան ի բնէ մտացի, ընդունակ ուսմանց, օժտուած ջանասիրութեամբ՝ կատարեց յաջողութեամբ դպրոցական ընթացքը տարրականէն մինչեւ միջնակարգը: Դպրոցական սեղանի առջեւ երեւան բերաւ ան իր վաղահաս խելամտութիւնը, ընդունակութիւնը լեզուներ սորվելու, լեզուաբանական ուսմանց հետաքրքրութիւնն եւ բանասիրական պարապմունքներու բերումը:

Վեշտասանամեայ աւարտած Վարժարանը՝ կը բաղմի ան ուսուցչական աթոռ, 18ամեայ կը հրաւիրուի Սանասարեան Վարժարան իբրեւ ուսուցիչ: Այս պաշտօնի մէջ տեսանք մենք զինքը մինչեւ 1920 մերթ ծխական եւ մերթ միջնակարգ դպրոցներու եւ վարժարաններու մէջ: Ան վարեց այս պաշտօնը առաւելապէս իբրեւ ապրուստի միջոց: Որովհետեւ չունեցաւ ան հովանաւոր մը, որ գնահատէր իր աշխատութիւնները եւ նիւթապէս նպաստէր վաստակաւորին:

Եթէ աչքի առաջ բերենք Աճառեանի տպագիր եւ անտիպ ստեղծագործութիւններու ցանկը, ստուգիւ պիտի զարմանանք, թէ ինչպէս ի գլուխ հանեց զանոնք իր կեանքի այնքան անոպաստ պայմաններուն մէջ:

Աճառեան թողուած իր ոյժերուն. անկուն կամքն էր, որ կը մղէր զինքը դէպի նպատակ, առանց վարանելու խոչնդոտներու առաջ: Ան մտադրած էր ըլլալ լեզուաբան:

Ուսանելու համար լեզուագիտութիւն ուղեւորեցաւ Պարիս. գտաւ ինքզինքը անտեսական տագնապի առաջ. չընկճեցաւ. հնարագէտ, առաւ կողովիկ մը թեւին տակ վաճառելու երեկոները անցորդներուն չամիչ եւ պիստակ. այնպէս կը հայթայթէր երկրորդ օրուան առօրեակը. յանձն առաւ մասնաւոր դասեր, գրական սպասարկութիւններ, հոգալու համարսարանական ծախքերը. սկզ. հայորդին չկարկառեց մէկուն ձեռք ողորմութիւն խընդրելու: Աճառեան միակ բարեկամ մ'ունեցաւ այդ տարիներուն յանձին իր ուսուցչապետին A. Meillet ի, որուն է վկայութիւնս. «Ես, որ գիտեմ, թէ որպիսի՛ կամք, կ'ուզեմ ըսել որ-

© National Library of Armenia